Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 30

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2008թ. հունիսի 13-ին ժամը 16:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ
Կարինե Բաղդասարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն, Կառավարման խորհրդի անդամ Կարեն Նազարյանի լիազոր ներկայացուցիչ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն

	մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Հակոբ Պետրոսյանը	«Հազարմյակի մարտարավեր» հիմնադրամ- Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար
Տիգրանուհի Բաղդասարյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի թարգմանիչ
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Նիստը բացեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող 8-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

   ա/ Հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,

գ/ Աշխատանքային պլան,
դ/ Ամփոփ հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,
ե/ Գնումների կատարման հաշվետվություն:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում իրականացված «Ճանապարհների կատարման վրա հիմնված պահպանման և շահագործման գործող համակարգի վերանայում և բարելավում» խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունքում Խորհրդատուի կողմից ներկայացված Առաջարկությունների ներկայացում և քննարկում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շինարարական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում և քննարկում:

4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի «Ճանապարհների ընթացիկ և պարբերական պահպանման երկարաժամկետ պլանի մշակում» Խորհրդատուի ընտրության համար կարճ ցուցակի և Առաջարկ ներկայացնելու հրավերի քննարկում և հաստատում:

5. «Յոթ ջրամբարների կառուցման/վերականգնման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/003 խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գործընթացի դադարեցում:

6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ -Հայստան» պետական ոչ առևտրային կազմակերպության և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միջև կնքված Իրականացման պայմանագրի փոփոխության նախագծի քննարկում և հաստատում:

7. Տեղեկատվություն ՇԽ գործունեության վերաբերյալ:

8. Այլ հարցեր՝

   ա/ «Երրորդ կարգի ոռոգման ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/002 խորհրդատվական մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում,

   բ/ «Ձրից դեպի Շուկա» բաղադրիչի «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» WM/IS-06/005 խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը ներկայացրեց, որ տվյալ եռամսյակից սկսած ՀՄԿ-ն կիրառելու է վճարումների նոր ընթացակարգ. «վճարման ընդհանուր համակարգ»: Համակարգը հնարավորություն է տալիս խորհրդատուներին, կապալառուներին և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հետ այլ պայմանագրային պարտավորությունների մեջ գտնվող անձանց վճարումները կատարել անմիջապես ՀՄԿ-ի կենտրոնակայան՝ Վաշինգտոնից:

Արա Հովսեփյանը միաժամանակ ներկայացրեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից ՀՄԿ-ին ներկայացվող «Հատկացման նախապայմանների հաշվետվության» մեջ չի բավարարված ընդամենը մեկ պայման, որում սահմանված է. «Կառավարությունը մշակել և ընդունել է օրենսդրություն և/կամ այլ իրավական ակտեր, կամ փոփոխել է գործող օրենսդրական կամ այլ իրավական ակտերը, որպեսզի հեշտացնի գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը»:

Սիմոն Ղոնաղչյանը այդ հարցի կապակցությամբ հայտնեց, որ ՀՀ ներկայիս օրենսդրությամբ սահմանված է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման հնարավորություն, ուստի անհրաժեշտ է բանակցել ՀՄԿ-ի հետ՝ այս նախապայմանը չեղյալ համարելու համար:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ դեռևս Հազարամյակի մարտահրավեր համաձայնագրի ստորագրման ժամանակ ՀՄԿ-ն ուսումնասիրել և հանգել է եզրակացության, որ ՀՀ օրենսդրությունը գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման համար նախատեսում է բավականին բարդ ընթացակարգ:

ՀՀ Վարչապետը պարզաբանեց, որ ներակայումս օրենսդրական դաշտի կատարելագործման և պարզեցման ուղղությամբ միջոցառումները սկսված են և համապատասխան հանձնարարական է տրված ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ արդարադատության նախարարություններին՝ ուսումնասիրել այդ ոլորտում առկա առաջավոր միջազգային փորձը և արդյունքների հիման վրա մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել իրավական ակտի նախագիծը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հանձնարարեց Սիմոն Ղոնաղչյանին հետամուտ լինել այդ հանձնարարականի համապատասխան նախարարությունների կողմից իրականացմանը:

Արայիկ Հովհաննիսյանն անդրադարձավ «Ամփոփ հաշվետվությանը»՝ նշելով, որ Ենթակառուցվածքներ հատվածում նախատեսված է, որ չորս գյուղերում երրորդ կարգի ջրանցքների շինարարության պայմանագրային արժեքի 15 %-ը պարտավորվում են վճարել շահառու համայնքները, սակայն պարզ չէ, թե որտեղից է առաջացել այդ համաֆինանսավորման գաղափարը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ Հազարամյակի մարտահրավեր համաձայնագրով նախատեսված է, որ երրորդ կարգի ջրանցքների նախագծային ծախսերի և շինարարարության 15%-ը վճարվելու է համապատասխան շահագրգիռ համայնքների կողմից: Այդ համաֆինանսավորումն արդեն իսկ ստացված է նշված չորս համայնքներից: Ընդ որում խոսքը վերաբերում է բացառապես երրորդ կարգի ջրանցքներին:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 8-րդ Հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ արդեն իսկ ձեռք է բերվել համաձայնություն FINNROAD ընկերության կողմից ներկայացրած առաջարկությունները քննարկելու ուղղությամբ:

Պարզաբանումից հետո **միաձայն որոշվեց՝** ընդունել ի գիտություն «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում իրականացված «Ճանապարհների կատարման վրա հիմնված պահպանման և շահագործման գործող համակարգի վերանայում և բարելավում» խորհրդատվական ծառայությունների մատուցման արդյունքում Խորհրդատուի կողմից ներկայացված Առաջարկությունները:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Տիգրան Դավթյանը հայտնեց, որ ներկայացված տեղեկանքում ամրագրված է, որ գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի շինարարական աշխատանքների իրականացման համար Համաձայնագրով նախատեսված է 61 մլն ԱՄՆ դոլար, իսկ պարոն Հովսեփյանի ներկայացրած տեղեկատվության համաձայն գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի համար նախատեսված է 67 մլն ԱՄՆ դոլար: Հետևաբար հարց է առաջանում, թե ներկայացված թվերից որն է ճիշտ:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի համար նախատեսված է 67 մլն ԱՄՆ դոլար, որից 61 մլն ԱՄՆ դոլարը՝ զուտ շինարարական աշխատանքների իրականացման համար, իսկ 6 մլն ԱՄՆ դոլարը՝ նախագծման, տեխնիկական վերահսկողության և նմանատիպ այլ միջոցառումների իրականացման համար:

Գուրգեն Սարգսյանը տեղեկացրեց, որ Առաջին փաթեթում ընդգրկված շինարարական աշխատանքների իրականացման համար ներկայացված հայտերի երաշխիքի ժամկետը համապատասխան ընկերությունների կողմից երկարացվել է մեկ ամիս ժամկետով՝ մինչև ս.թ. հուլիսի 9-ը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը ընդգծեց այդ շինարարական աշխատանքների շուտափույթ սկսման անհրաժեշտությունը:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքների մրցույթի շրջանակում հայտատուների մրցութային հայտի երաշխիքային ժամկետի երկարաձգումը և ի գիտություն ընդունել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շինարարական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

<u>Միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի «Ճանապարհների ընթացիկ և պարբերական պահպանման երկարաժամկետ պլանի մշակում» Խորհրդատուի ընտրության համար կարճ ցուցակը և Առաջարկ ներկայացնելու հրավերը:

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Կարինե Դանիելյանը հայտնեց, որ յոթ ջրամբարների շարքում կան նաև այնպիսիք, որոնք գործում են և առկա է միայն վերականգնման խնդիր, օրինակ՝ Կապսի ջրամբարը: Արդյոք հնարավոր չէ վերականգնել այդ ջրամբարները:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ Կապսի ջրամբարի դեպքում առկա է անվտանգության խնդիր, որը Հազարամյակի մարտահրավեր ծրագրի հիմնական նպատակների մեջ չի մտնում, ծրագրի հիմնական նպատակը գյուղացիական արտադրողականության աճն է և եկամուտի ավելացումն է:

Աշոտ Ոսկանյանը նշեց, որ քանի որ յոթ ջրամբարներից վեցի կառուցումը չի իրականացվելու, ուստի բավականաչափ գումար է տնտեսվելու: Այդ պարագայում, ինչու գումարը չուղղել նոր ջրամբարի կառուցմանը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ գումարն ուղղվելու է ծրագրով նախատեսված այլ ոլորտների իրականացմանը, ինչպիսիք են երրորդ կարգի ջրանցքները, մայր ջրանցքները և այլն:

Արմեն Գևորգյանը նշեց, որ ծրագրի շրջանակներում կառուցման ենթակա միակ՝ Արգիճի ջրամբարի կառուցման թասում առկա հողի սեփականության խնդրի լուծման ուղղությամբ ՀՀ կառավարությունն արդեն իսկ որոշակի միջոցառումներ է իրականացրել, որի արդյունքում պարզվել է, որ տվյալ տարածքում առկա են ինչպես օրինական, այնպես էլ անօրինական, բայց փաստացի սեփականատերեր: Ուստի այդ հարցը լուծելու համար անհրաժեշտ է ՀՀ պետական բյուջեից հատկացնել 35-50 մլն ՀՀ դրամ:

Պարզաբանումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Յոթ ջրամբարների կառուցման/վերականգնման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/003 խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գործընթացի դադարեցումը:

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Ներսես Երիցյանն առաջարկեց ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մասնագիտական հմտությունները տվյալ պայմանագրի շրջանակներում օգտագործել ոչ միայն ծրագրային, այլև համապետական նշանակության ուսումնահիրությունների իրականացման համար:

Արայիկ Հովհաննիսյանը մատնանշեց հարցվողների շարքում բացի գյուղապետերից նաև ավագանու ղեկավարների ավելացման անհրաժեշտությունը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ -Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միջև կնքված Իրականացման պայմանագրի նախագծի փոփոխությունը:

Օրակարգի 7-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի շահառուների խորհրդի անդամ/կառավարման խորհրդի պատվիրակ Աշոտ Ոսկանյանը:

Հարցի ներկայացումից հետո **միաձայն որոշվեց՝** ընդունել ի գիտություն ՇԽ գործունեության վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:

Օրակարգի 8-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ա/ կետի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատել «Երրորդ կարգի ոռոգման ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-07/002 խորհրդատվական մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքների:

Օրակարգի 8-րդ հարցի բ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Աշոտ Ոսկանյանը նշեց, որ ներկայացված ընկերությունը ծրագրի շրջանակներում իրականացնում է ևս մեկ պայմանագիր, ուստի չկա արդյոք շահերի բախման խնդիր:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ և՛ ժամկետների և՛ աշխատակազմի մասով ընկերության առաջարկն ուսումնասիրվել է և պարզ է դարձել, որ շահերի բախում առկա չէ:

Ներսես Երիցյանը հարցրեց, թե կա արդյոք այս ոլորտում երկարաժամկետ ռազմավարություն:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ներկայումս այդպիսի ռազմավարություն չկա, սակայն տվյալ ծրագրի հիմնական նպատակներից մեկն է հենց այդ ռազմավարության մշակումը:

բ/ կետի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Ձրից դեպի Շուկա» բաղադրիչի «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» WM/IS-06/005 խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը :

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը ներկաներին տեղեկացրեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը գործուղվում է Վաշինգտոն՝ ՀՄԿ-ում հանդիպումների մասնակցելու համար:

Վերջինիս մասնակցությունը ներկայումս շատ արդիական է, քանի որ անհրաժեշտ է ՀՄԿ-ին ներկայացնել Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքների շուտափույթ սկսման անհրաժեշտությունը, քանի որ ցանկացած ուշացում հանգեցնում է ժամանակային և գումարային լուրջ կորուստների:

Այսպիսով՝ ՀՀ կառավարությունը և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը սպասում են ՀՄԿ-ի հավանությանը՝ շինարարական աշխատանքների մեկնարկման համար:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյան